ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԱՐԱՄ ՑՈԼԱԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Հանրապետության գյուղատնտեսությունն ունի կարևորագույն տեղ երկրի համախառն ներքին արդյունքի ձևավորման, հանրապետության բնակչության զբաղվածության ապահովման, գյուղական բնակավայրերի զարգացման և, որ ամենակարևորն է, բնակչության պարենային անվտանգության ապահովման համար, սակայն նշվածի հետ մեկտեղ՝ մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, գյուղատնտեսությունում արդյունաբերականացման մակարդակը զգալիորեն ցածր է, մասնավորապես ցածր է գյուղատնտեսության արտադրական գործընթացների մեքենայացման մակարդակը, որի հետևանքով բարձր է ձեռքի աշխատանքի տեսակարար կշիռը, գյուղատնտեսությունում չափազանց դանդաղ տեմպերով են ներդրվում արդիական այնպիսի տեխնոլոգիաները, որոնք նախապայման են հանդիսանում գյուղատնտեսությունում արտադրողականության բարձրացման և ոլորտի արդյունաբերականացման համար:

Հանրապետության գյուղատնտեսությունում արտադրողականության ցածր մակարդակը գլխավորապես հետևանք է նրա, որ ոլորտում արտադրական գործընթացները գլխավորապես իրականացվում են ավանդական մեթոդներով:

Հանրապետության գյուղատնտեսությունում՝ շուկայական հարաբերությունների անցման մեկնարկի և հետագա ժամանակահատվածներում, գրեթե գործուն քայլեր չեն ձեռնարկվել գյուղատնտեսության արդյունաբերականացման ուղղությամբ: Գյուղատնտեսությունում պետության աջակցությամբ իրականացվել են մի շարք

պետական ծրագրեր, որոնք ուղղված են եղել գյուղատնտեսության կենսագործունեությանը, մասնավորապես այդ ծրագրերը ուղղված են եղել մշակաբույսերի սերմերի, հանքային պարարտանյութերի և դիզելային վառելիքի մատչելի գներով մատակարարմանը, բույսերի առավել վտանգավոր և կարանտին հիվանդությունների դեմ պայքարին, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմանը, բնական կերահանդակների արդյունավետ օգտագործմանը և այլ ծրագրեր:

Վերոնշյալն էլ պայմանավորում է ուսումնասիրվող թեմայի արդիականությունն ու հրատապությունը, որը բխում է հանրապետության գյուղատնտեսության զարգացման, առաջնահերթ անհրաժեշտ մթերքների արտադրության ծավալների ավելացման, դրանց որակի բարելավման և հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացման պահանջներից:

Հետազոտության հիմնական նպատակը և խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծման հիմնական ուղղությունների առաջադրումն է: Այդ նպատակի իրականացման համար աշխատանքում դիտարկվել են հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել գյուղատնտեսության արդյունաբերականացման էությունը և առանձնահատկությունները,
- ✓ հիմնավորել գյուղատնտեսության արդյունաբերականացման անհրաժեշտությունը և դրան նպաստման մոտեցումները,
- ✓ վերլուծել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունները և ոլորտի արդյունաբերականացման պայմանները,
- ✓ ուսումնասիրել գյուղատնտեսության արդյունաբերականացման միջազգային փորձը և տեղայնացման հնարավորությունները,
- ✓ վերլուծել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման ներկայիս նախադրյալները,
- ✓ գնահատել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները,

- ✓ գնահատել գյուղատնտեսության արդյունաբերականացման գործոնների քանակական ազդեցությունը,
- ✓ առաջարկել գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները,
- ✓ գնահատել գյուղատնտեսության արդյունաբերականացման առաջարկվող ուղղությունների տնտեսական արդյունավետությունը:

Հետազոտության գիտական նորույթը և հիմնական արդյունքները

Ատենախոսության հիմնական նորույթը կայանում է նրանում, որ գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների բացահայտման արդյունքում՝ կանխորոշվել են դրանց լուծման հիմնական ուղղությունները: Հիմնական գիտական արդյունքները պայմանավորված են հետազոտության շրջանակներում առաջադրված խնդիրներով և մասնավորապես հետևյալն են.

- ✓ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունների համատեքստում գնահատվել են ոլորտի արդյունաբերականացման պայմանները և գործոնները,
- ✓ բացահայտվել են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները,
- ✓ գնահատվել է գյուղատնտեսության արդյունաբերականացման վրա ազդող մի շարք գործոնների քանակական ազդեցությունը,
- ✓ մշակվել են գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները,
- ✓ գնահատվել է գյուղատնտեսության արդյունաբերականացման առաջարկվող ուղղությունների տնտեսական արդյունավետությունը:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և արդյունքները, գործնական նշանակությունը, փորձարկումը և հրապարակումները, կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Գյուղատնտեսության արդյունաբերականացման տեսական և մեթոդաբանական դրույթները» գլխում ներկայացվել է գյուղատնտեսության արդյունաբերականացման էությունը և առանձնահատկությունները, գյուղատնտեսության արդյունաբերականացման անհրաժեշտությունը և դրան նպաստման մոտեցումները, ՀՀ գյուղատնտեսության առանձնահատկությունները և ոլորտի արդյունաբերականացման պայմանները:

Ատենախոսության երկրորդ՝ «Գյուղատնտեսության արդյունաբերականացման միջազգային փորձը և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսագիտական հիմնախնդիրները» գլխում ներկայացվել են գյուղատնտեսության արդյունաբերականացման միջազգային փորձը, տեղայնացման հնարավորությունները, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման ներկայիս նախադրյալները և արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները:

Ատենախոսության երրորդ՝ «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները» գլխում ներկայացվել են գյուղատնտեսության արդյունաբերականացման գործոնների ազդեցության քանակական գնահատումը, գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները, գյուղատնտեսության արդյունաբերականացման առաջարկվող ուղղությունների տնտեսական արդյունավետությունը:

Հետազոտության արդյունքում ստացված արդյունքային դրույթներն ամփոփված են ատենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունում առկա են որոշակի բացթողումներ, որոնք ներկայացված են ստորև՝

1. Ատենախոսության առաջին գլխի որոշ աղյուսակներ, այն է՝ աղ. 1.2.1, աղ. 1.3.4., աղ. 1.3.5, բավականին մակերեսորեն են վերլուծված: Նպատակահարմար կլիներ ավելի մանրամասն վերլուծություն կատարել:
2. Ատենախոսության որոշ աղյուսակներ ներկայացված են 2014թ. տվյալներով (աղ. 1.3.1, 1.3.4), իսկ որոշ աղյուսակներում նշված չեն, թե որ թվականի տվյալներ են ներկայացված (աղ. 1.3.2, 1.3.3, 2.3.1 և այլն): Հասկանալի է, որ գյուղատնտեսության համատարած հաշվառում կատարվել է նշված տարեթվին, սակայն հաշվի առնելով աշխատանքի ներկայացման ժամկետները՝ նպատակահարմար կլիներ, որպեսզի առավել թարմ տվյալներ ներկայացվեին և վերլուծվեին:
3. Ատենախոսության երկրորդ և չորրորդ նորույթները ցանկալի կլիներ միավորել:
4. Աշխատանքն ավելի կշահեր, եթե 2.1. «Գյուղատնտեսության արդյունաբերականացման միջազգային փորձը և տեղայնացման հնարավորությունները» ենթագլխում ներկայացվեր ուսումնասիրվող երկրներից որևէ մեկի արդյունաբերականացման գործոնների ազդեցության քանակական գնահատումը և համեմատվեր ՀՀ-ի հետ:
5. Ատենախոսությունը միայն կշահեր, եթե ներկայացված գյուղատնտեսության արդյունաբերականացման նշված պայմանների հետ մեկտեղ ուսումնասիրվեր նաև գյուղատնտեսության մեջ ներգրավված աշխատուժի հարցը:

Եզրակացություն

Ատենախոսության վերաբերյալ կատարված դիտողությունները չեն անդրադառնում հետազոտության գիտական արժեքի վրա, չեն նսեմացնում ստացված արդյունքների գիտական նշանակությունը և բացասական ազդեցություն չեն թողնում հետազոտության ընդհանուր գնահատականի վրա:

Արամ Ցոլակի Հովհաննիսյանի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները եվ դրանց լուծման ուղիները» թեմայով թեկնածուական ատենախոսության արդյունքներն ունեն ինչպես գիտական, այնպես էլ գործնական ու կիրառական նշանակություն: Այն ավարտուն հետազոտություն է, որտեղ առաջադրված հիմնախնդիրները, դրանց ուսումնասիրության մեթոդաբանությունը և իրականացված հետազոտությունները կատարված են պատշաճ մակարդակով:

Այսպիսով, Արամ Ցոլակի Հովհաննիսյանի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները եվ դրանց լուծման ուղիները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի, ինչպես նաև՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող Հայաստանի Հանրապետության ԲՈԿ-ի այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Մ. Գ. Մանուչարյան**

16 դեկտեմբերի 2020 թվականի

Տնտեսագիտության թեկնածու Մերի Գագիկի Մանուչարյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ
գիտ. քարտուղար, տ.գ.թ., դոցենտ **Ք. Յու. Բաղդասարյան**